ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

5-ԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

15.07.2016թ.

Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետ, պարոն Աբրահամյան,

Խորհրդի հարգարժան անդամներ,

Ինձ համար այսօր պատասխանատու օր է, քանի որ ես ամփոփում եմ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի պաշտոնում իմ կատարած 5 տարվա աշխատանքը և ցանկություն հայտնում շարունակելու իմ գործունեությունը՝ միտված հարազատ կրթօջախի բարեփոխմանն ու զարգացմանը:

Կրթությունը, ավանդաբար, մեր ժողովրդի համար բարձր արժեք է: Իսկ մեր օրերում բարձրորակ, մրցունակ կրթական ծառայության մատուցումը նաև հրամայական է, մարտահրավեր՝ հաշվի առնելով կրթության ոլորտում ստեղծված մրցակցությունը, մեր երկրում արտերկրյա համալսարանների ներկայությունը, տարեցտարի նվազող ուսանողների քանակը, սոցիալ-տնտեսական իրավիճակը և առկա մի շարք այլ հանգամանքներ:

2012-2016 թվականներին Տնտեսագիտական համալսարանի ռազմավարական զարգացումն առավելապես ուղղված էր համալսարանական կարողությունների զարգացմանը, հիմնական գործընթացների կարգավորմանը, կայունության ապահովմանը:

Անցած 5-ամյա ժամանակաշրջանի համար առանձնացրել էինք զարգացման հետևյալ ուղղությունները՝ գիտահետազոտական գործունեության կանոնակարգում և ուժեղացում, տեղեկատվայնացում, միջազգային գործունեություն, սոցիալական գործունեություն, ուսանողների դաստիարակչական աշխատանք, կադրային քաղաքականություն, համալսարանի կառավարում, տնտեսական գործունեություն և նյութատեխնիկական հենքի հզորացում:

«Մենք փոխվում ենք»

2011թվականին «Մենք փոխվում ենք» կարգախոսի ներքո տրվեց համալսարանի զարգացման նոր շրջանի ծրագրի մեկնարկը: Անցած 5 տարիների ընթացքում համալսարանի զարգացման և առաջընթացի համար իրագործվել է համալիր ծրագիր՝ գործունեության բոլոր ուղղություններով, այդ թվում՝ ուսումնամեթոդական ու նյութատեխնիկական հենքի բարեփոխում և վերազինում, համալսարանական գիտության և հետազոտական ուղղության զարգացում, կրթության որակի բարձրացում, աշխատաշուկայի հետ կապերի ամրապնդում, հանրային կապերի ձևավորում, ուսումնական գործընթացի վերաիմաստավորում, միջազգային կապերի ընդլայնում, պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստում, համալսարանի նոր կերպարի ձևավորում՝ Բրենդբուքի ստեղծում, միջավայրի արդիականացում և տասնյակ այլ խնդիրների լուծում: Այսօր՝ 5 տարի անց, միայն ավարտուն խոշոր ծրագրերի թիվը շուրջ 5 տասնյակ է:

Հարգելի ներկաներ

Ցանկանում եմ համառոտ անդրադառնալ մեր խոշոր ծրագրերին, ձեռքբերումներին համալսարանի գործունեության բոլոր ուղղություններով:

Կրթության որակ

Կրթության որակը մեր գործունեության գերնպատակն է, և այս մոտեցումն է մշտապես եղել մեր գործունեության առանցքում: Համալսարանը ուժգնացող մրցակցությանը դիմակայելու և կրթության վերջնարդյունքները շահակիցների պահանջներին հնարավորինս համապատասխանեցնելու նպատակով 2011-2016 թվականներին ծավալել է նոր պահանջներին համահունչ գործունեություն՝ կարևորագույն նպատակ

համարելով առաջարկվող կրթական ծառայությունների որակի բարձրացումը։

Անցած հինգ տարիներին զգալի աշխատանքներ են կատարվել նաև կրթության որակի բարձրացման և կրթական գործընթացի կատարելագործման ուղղությամբ։ Այդ նպատակով մշակվել և հրատարակվել է «ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկ» ուսումնական ուղեցույցը, «Կրթական ծրագրեր կազմելու ուղեցույց»-ը, փոփոխություններ են կատարվել ուսումնական պլանների նորմատիվներում՝ պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության նորմատիվները համապատասխանեցվել են ՀՀ Կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման պահանջներին։ Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով միացվել կամ վերակազմավորվել են մի շարք փոքրաթիվ աշխատակիցներ կամ ժամանակակից պահանջներին չհամապատասխանող գիտական ուղղվածություն կամ թույլ ներուժ ունեցող ամբիոններ։

Այս ուղղությամբ, որպես գլխավոր հաջողություն, կցանկանայի շեշտել 2015թ. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից համալսարանին 4 տարով ինստիտուցիոնալ հավատարմագրման շնորհումը: Համալսարանը և նրա մասնաճյուղերը ինստիտուցիոնալ հավատարմագրման ներկայացնելու նպատակով սեղմ ժամկետներում կատարվել է ինքնավերլուծության մեծածավալ աշխատանք, ինչը նաև մեզ հնարավորություն է տվել ճշգրտելու առաջիկա գործունեության առաջնահերթ ուղղությունները։

Համալսարան-աշխատաշուկա համագործակցություն

Կրթության որակի բարձրացման և շրջանավարտներին աշխատանքով ապահովելու կարևորագույն խնդրի լուծման նպատակով անցած շրջանում մեր համալսարանում սկզբնավորվեց գործատուների հետ կանոնակարգված համագործակցություն: Այսօր Տնտեսագիտական համալսարանը շուրջ 30 գործատուների հետ համագործակցության պայմանագրեր ունի, որոնք թե՛ պետական հատվածից են, թե՛ մասնավոր: Խոշոր ծրագրերից են մագիստրոսական կրթական ծրագրերի շուրջ համագործակցությունը ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, պետական գույքի կառավարման վարչության, տարածքային կառավարման նախարարության ջրային պետական կոմիտեի, բնապահպանության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների և Հայաստանի բանկերի միության հետ: Գործատուների հետ համագործակցությունն ուղեկցվել է նաև նյութատեխնիկական բազայի հարստացմամբ, համագործակցող կառույցները համալսարանին են նվիրել ժամանակակից լսարաններ: Տեխնիկապես հագեցած հարկային և մաքսային 3 լսարաններ է նվիրել Պետական եկամուտների կոմիտեն: Համակարգչային մեկական լսարաններ են նվիրել նաև «Փյունիկ» բարեգործական հիմնադրամն ու «Հայբիզնեսբանկը»:

Գիտահետազոտական գործունեություն

Գիտահետազոտական գործունեությունն իրականացվել է համաձայն «ՀՊՏՀ 2012-2017 թվականների գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգի»: Անցած շրջափուլում ծանրակշիռ քայլեր են կատարվել համալսարանում գիտահետազոտական ուղղության զարգացման համար, որոնցից առանցքային են գիտահետազոտական գործունեության ինստիտուցիոնալ

կարողությունների զարգացումը, ֆինանսավորման ծավալների մեծացումը, ֆինանսավորվող հետազոտություններում համալսարանի ուսանողների, ասպիրանտների և դասախոսների ներգրավվածության շարունակական բարձրացումը: Այս ոլորտում համալսարանի խոշոր ձեռքբերումներից է խորհրդի որոշմամբ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ստեղծումը, ներհամալսարանական գիտական դրամաշնորհների կարգի ներդրումն ու գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի մրցույթի վերաբերյալ կանոնակարգը:

Մենք հավատացած էինք, որ հանրապետության տնտեսագետ պատրաստող ամենախոշոր համալսարանը չի կարող անմասն մնալ տնտեսության զարգացման գործից, և այսօր ուրախալի է, որ մեր հետազոտություններով կարողանում ենք մեր ներդրումը բերել այդ գործին: Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի հանձնարարությամբ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում հետազոտություններ են կատարվում նախարարությունների համար:

Գիտահետազոտական գործունեության ֆինանսավորման համար համալսարանի բյուջեից տարեկան հատկացվել է մոտ 100 մլն դրամ:

Միջազգային գործունեություն

Համալսարանի միջազգային գործունեությունը, որն իրականացվել է ՀՊՏՀ 2012-2016 թթ. ռազմավարական զարգացման ծրագրի հիման վրա, միտված է համաշխարհային կրթական և գիտական տարածությանն ինտեգրվելուն, կրթական և գիտական ծառայությունների շուկայում մրցունակության բարձրացմանը, դիրքերի ուժեղացմանը, կարգավիճակի ամրապնդմանը: Այս ուղղությամբ իրականացված ծրագրերից առանձնացնենք հետևյալները՝ անցնող տարիներին մենք ներգրավվել ենք Տեմպուսի և Էրազմուսի ծրագրերում, դարձել նաև Տեմպուսի «Արարատ»

ծրագրի համակարգողը: Կրթության և գիտության նախարարության թույլտվությամբ 2012 թվականից համալսարանն սկսել է իրականացնել օտարերկրյա քաղաքացիների կրթության կազմակերպում, իսկ ՀՀ Կառավարության որոշմամբ 2014 թվականին ՀՊՏՀ-ում հիմնադրվել է Բրիտանական Բիզնես դպրոց: Զարգացել են գործընկերային հարաբերություններն արտասահմանյան ավելի քան 20 բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ

Սոցիալական քաղաքականություն

Անցնող տարիներին համալսարանը հստակ և հասցեական սոցիալական քաղաքականություն է վարել, ներդրել սոցիալական տարատեսակ փաթեթներ՝ ուղղված թե՛ աշխատակիցներին, թե՛ ուսանողներին: Լավ սովորող սոցիալապես անապահով ուսանողների համար ներդրվել է կրթաթոշակ-զեղչերի համակարգ, համալսարանի օտարերկրյա և մարզաբնակ ուսանողների համար գործարկվել է «Տնտեսագետ» ուսանողի տունը, վերանորոգվել ու նոր սպասարկմամբ է աշխատում բուֆետը, բարձրացվել է անվանական կրթաթոշակների չափը, Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում մատչելի պայմաններով իրենց հանգիստն են անցկացրել համալսարանի մի քանի հազար աշխատակիցներ և ուսանողներ, հրավիրվում են նաև Արցախի պետական համալսարանի ներկայացուցիչներ: 2013թվականից աշխատակիցների համար իրականացվում է բժշկական ապահովագրություն, 2014 թվականից 10 տոկոսով բարձրացվել է աշխատակիցների աշխատավարձը, տարեկան երկու անգամ տրվել են 100 տոկոսանոց հավելավճարներ, իսկ 2015 թվականի նոյեմբերից բուհի սոցիալական քաղաքականության շրջանակներում ներդրվել է «Նորաստեղծ ընտանիքների աջակցման և երեխաների ծննդյան խրախուսման կարգ», որը նախատեսում է 100-250

հազար դրամ միանվագ խրախուսում ՀՊՏՀ աշխատակիցներին՝ ընտանիք կազմելու և երեխա ունենալու դեպքում:

Միջավայրի արդիականացում

Հարգելի ներկաներ

Մեր գործունեության ամբողջ շղթայում մեծապես կարևորվել են միջավայրի արդիականացման, նյութատեխնիկական բազայի հարստացման հարցերը: Առաջին հայացքից սա կարող է անկարևոր թվալ, սակայն մեր օրերում առանց արդիական միջավայրի և տեխնիկական լուծումների հնարավոր չէ իրականացնել բարձրակարգ կրթական ծառայության մատուցում: Այսօր մեր համալսարանում ստեղծված են թվային գրատախտակներով և պրոյեկտորներով լսարաններ, տեսաձայնային համակարգով քննարկումների սրահ, ներդրվել է անվտանգության համակարգ, հիմնանորոգվել են համալսարանի բոլոր մասնաշենքերը, սրահները, ճեմասրահները, հիմնանորոգվել է 98 լսարան, 76 աշխատասենյակ, բացվել է հրաձգարան, վերակառուցվել է բուհի թանգարանը, նորացվել է ուսումնական և վարչական ստորաբաժանումների գույքը (շուրջ 2136 միավոր), ձեռք է բերվել շուրջ 650 տեխնիկական սարքավորում, ներդրվել է թվայնացված ավտոմատ հեռախոսակապ, թարմացվել է մասնաշենքերի արտաքին տեսքը, նորացվել են բոլոր դռներն ու պատուհանները, լուծվել է համալսարանի արտաքին լուսավորության խնդիրը, իրականացվել է էներգախնայողության համալիր ծրագիր: Ցանկանում եմ նշել, որ համալսարանի նախասրահների վերանորոգմանն ու արդիականացմանն աջակցություն է ցուցաբերել «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամը: Վերակառուցվել և արդիականացվել է համալսարանի բակը՝ դառնալով գողտրիկ միջավայր՝ բացօթյա հանդիպումների և դասերի համար նախատեսված յուրահատուկ ամֆիթատրոնով, բեմահարթակով, տաղավարներով, «ՀՊՏՀ»

վերտառությամբ նստարաններով, WiFi կապով և պարբերաբար թարմացվող ծաղկային կոմպոզիցիաներով:

Անչափ կարևոր բարեփոխում է իրականացվել հրատարակչական մասում՝ այսօր ունենք արդիական սարքավորումներով նորագույն տպագրություն ապահովող հրատարակչություն: Նշանակալի ձեռքբերումների շարքում ցանկանում եմ առանձացնել նաև գրադարանային գործունեության որակական փոփոխությունը՝ այսօր ունենք թվայնացված գրադարան, և այս գործընթացը շարունակվում է, իսկ բոլորովին վերջերս էլ մեր բակում բացվել է Հայաստանում առաջին QR գրադարանը, որը հնարավորություն է տալիս բջջային հեռախոս ներբեռնել գրքի ամբողջական տարբերակը:

Ուսանողական կյանք

Հարգելի ներկաներ

Բոլոնիայի գործընթացի առանցքային՝ ուսանողակենտրոն գործունեության դրույթը հարազատ է եղել մեզ և անցած տարիներին ընդլայնվել է ուսանողների մասնակցությունը ոչ միայն համալսարանի կառավարման համակարգում, այլև համալսարանական բոլոր գործընթացներին: Ուսանողների հետ ձևավորվել են համագործակցային հարաբերություններ, ինչի արդյունքն են նաև մեր ուսանողների բազմաթիվ հաջողությունները՝ ոչ միայն ներբուհական, այլև միջբուհական, հանրապետական և միջազգային հարթակներում: Հատկապես նշանակալի է բանակ-հասարակության կապի ամրապնդման, համալսարանում ռազմահայրենասիրական ոգին բարձր պահելու նպատակով կազմակերպվող տարատեսակ միջոցառումները, նաև ավանդույթ դարձած զորամասեր այցերը: Ես և ուսանողական կառույցի ներկայացուցիչները զորամասեր ենք այցելել նաև ՀՀ վարչապետ, համալսարանի խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ:

Հասարակայնության հետ կապեր

Անցնող տարիներին դրվել է մեզ համար կարևոր մեկ գործունեության սկիզբ ևս՝ դա հասարակայնության հետ կապերի կանոնակարգումն է, ինչն ապահովել է համալսարանի գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը, հանրության հետ կապերի սերտացումը, լրատվամիջոցների հետ ինտենսիվ համագործակցությունը: Համալսարանը լայնորեն ներկայացված է համացանցում, բուհական կյանքն արտացոլված է լրատվամիջոցների մի քանի հարյուր հրապարակումներում: Սա կարևոր գործիք է համալսարանի հեղինակության, ինչպես նաև խթան՝ սոցիալական պատասխանատվության բարձրացման գործում:

Ցանկանում եմ հատուկ շեշտել, որ Տնտեսագիտական համալսարանի զարգացման գործում մեծ աջակցություն է ցուցաբերել համալսարանի խորհուրդը՝ ՀՀ վարչապետ, համալսարանի խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ, ինչի համար ցանկանում եմ հայտնել իմ խորը երախտագիտությունը:

Հարգելի ներկաներ

Ես փորձեցի համառոտ ներկայացնել մեր կողմից կատարված խոշոր ծրագրերը, իսկ ավելի ամբողջական այն ներկայացված է Ձեզ նախապես տրված և այժմ էլ ձեր սեղաններին դրված 5-ամյա աշխատանքային տարեգրությունում, որում տեսանելի են բուհի ձեռքբերումները:

Կատարված աշխատանքը տեսանելի է, սակայն սա չի նշանակում, որ համալսարանն այսօր զարգացման անհրաժեշտ մակարդակի վրա է: Իհարկե, բոլոր ուղղություններով կատարված աշխատանքը ստեղծել է նորարարական այն հիմքը, որը հնարավորություն կտա առաջիկա տարիներին զարգացնելու համալսարանական կրթությունը, սակայն անելիքներն ու մարտահրավերները շատ են և պահանջում են ամենօրյա ջանադիր աշխատանք:

Համոզված եմ, որ համալսարանի զարգացման ձեր կողմից հաստատված ռազմավարական ծրագրի իրագործումը մեզ հնարավորություն կտա հասնելու նախանշված նպատակների իրագործմանն ու նոր ձեռքբերումների արձանագրմանը:

Շնորհակալություն ուշադրության համար